ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Կ811

Ք. ԵՐԵՎԱՆ, ՆՈՅԵՄԲԵՐԻ ՔՍԱՆԻՆՆԻՆ
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆԻ

29.11.2013թ.

«ԵՆԹԱՎԱՐՁԱՏՈՒ»՝ « ԼԻՍՅՈՒ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ
Իրավաբանական հասցեն՝ Տավուշի մարզ, քաղաք Դիլիջան, Կալինինի 171 շենք, 16 բնակարան
Ի դեմս տնօրեն՝ ՍԱՐԻԱՄ ԱԼՖՐԵԴԻ ԴԱՎԹՅԱՆԻ ծնված 16.12.1968թվականին
որի անունից համաձայն 22.10.2013 թվականի թիվ L-15 լիազորգրով հանդես է գալիս ԱՐՄԵՆԱԿ ԱՐԱՐԱՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ծնված ՝ 13.08.1976թ.
Անձնագիր՝ AF0391379 տրված 036-ի կողմից 14.12.2001թվականին
վավերականության ժամկետը երկարձգված է մինչև 14.12.2016թ.
Հաշվառված՝ քաղաք Դիլիջան, Մյասնիկյան փողոց, 1 փակուղի, 8 տուն
Հեռախոս՝ 093733310
որը գործում է համաձայն կանոնադրության գրանցման համար 21.110.00524 գրանցված 20.03.2006 թվականին վկայական 03 Ա 071048

ԵՎ «ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼ» Հայաստանի Հանրապետությունը ի դեմս « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ» ՀՄ, որի անունից հանդես է գալիս աշխատակազմի ղեկավար՝ ԱՐՏԱԿ ԱՇՈՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ծնված 30.10.1967թվականին
Անձնագիր՝ AM0389543 տրված 043-ի կողմից 25.07.2011թվականին
Հաշվառված՝ Սարտունի, Աստղաձոր 4 փողոց, 16 տուն
Հեռախոս՝ 055996622, 581682
որը գործում է համաձայն կանոնադրության գրանցման համար 226.180.05321 գրանցված 21.04.2004 թվականին վկայական 01 Բ 000932

Կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1 Ենթավարձատուն համապատասխան վճարի դիմաց ,ենթավարձակալի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնում՝ Դիլիջան քաղաքի, Մյասնիկյան թիվ 66 (վաթսունվեց) հասցեում գտնվող անշարժ գույքից ՝ 19.5 (տասնինը ամբողջ հինգ) քմ.մակերեսով 2-րդ հարկի թիվ 9-րդ սենյակը /ըստ պայմանագրին կից նշագծված մասի/: այսուհետև «ՕԲՅԵԿՏ»-ի մաս : « ԼԻՍՅՈՒ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կողմից օգտագործվող տարածքը բաղկացած է՝ 2091.1 (երկու հազար իննսունմեկ ամբողջ մեկ) քմ. մակերեսից, ամբողջ գույքը գտնվում է 0.096 (զրո ամբողջ զրո իննսունվեց) հա բնակավայրերի սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա:

1.2. Պայմանագրի կնքման պահին մասը օգտագործման իրավունքով պատկանում է « ԼԻՍՅՈՒ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դիլիջան տարածքային ստորաբաժանման կողմից 28.06.2006թ. տրված օգտագործման իրավունքի հ. 0064048 վկայականով:

1.3. Սույն պայմանագիրը կնքելու պահին անշարժ գույքի նկատմամբ բռնագրավում կամ բռնագանձում տարածված չէ, այն արգելանքի կալանքի տակ չի գտնվում, գրավադրված չէ և ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով: Սույնով հաստատվում է նաև, որ նշված «ՕԲՅԵԿՏ»-ի մասը վարձակալությամբ չի հանձնված և օգտագործման իրավունքով տրամադրված չէ, ազատ է երրորդ անձանց պահանջներից և սույն պայմանագրում չնշված այլ տեսակի իրավական բեռնավորումներից, չի հանդիսանում իրավաբանական անձի կամ դրա առանձնացված ստորաբաժանման գործունեության վայր կամ իրավաբանական հասցե: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Տավուշի տարածքային ստորաբաժանման «Դիլիջան» սպասարկման գրասենյակի կողմից 31.10.2013 թվականին տրված US-31102013-11-0004 միասնական տեղեկանքի, գրանցված սահմանափակումներ չկա:

1.4. Սույն պայմանագրի կնքման համար հիմք է հանդիսացել 28.06.2006թ. Դիլիջան նոտարական տարածքի նոտար Ա.Եգանյանի կողմից վավերացված 1601 «Ոչ բնակելի տարածքի վարձակալության» պայմանագիրը ,որի 2.2.5.կետով նախատեսում է ենթավարձակալություն կնքել միայն Վարձատուի համաձայնությամբ: Վարձատուն 22.10.2013 թվականին թիվ 0/17-13 գրությամբ տվել է իր համաձայնությունը ենթավարձակալության հանձնելու:

1.5. Պայմանագիրը կնքելիս կողմերը ղեկավարվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած այն հարցերը, որոնք չեն կարգավորվի պայմանագրով, ենթական են լուծման ՀՀ օրենսդրության համապատասխան:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.ԵՆԹԱՎԱՐՁԱՏՈՒՆ իրավունք ունի՝

2.1.1. ԵՆՔԹԱՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ վճարել վարձավճարը.
2.1.2. Պահանջել ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼԻՑ օբյեկտի մասն օգտագործել սույն պայմանագրի պայմանների և դրա նշանակությանը համապատասխան
2.1.3. Եթե ենթավարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտի մասը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ ՝պահանջել վարձավճար կետանցի ողջ ժամանակահատվածի համար